Արագածոտնի և Արմավիրի մարզային բաժին

ք. Աշտարակ,0204, Էջմիածնի խճ. 65, հեռ.060713522
Աշոտ Արտավազդի Գալստյան
Արագածոտնի մարզ, Ծաղկահովիտ, Վարդաբլուր,
1 փ., 22 տ.
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
ք.Երևան, Կենտրոն, Մ. Մկրտչյան 5

ՈՐՈՇՈՒՄ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

«24» նոյեմբեր 2021թ. ք. Աշտարակ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Արագածոտնի և Արմավիրի մարզային բաժին, հարկադիր կատարող արդարադատության ավ. լեյտենանտ Գրիշա Բաղումյանս ուսումնասիրելով թիվ 01389245 կատարողական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից «28» հուլիս 2016թ. տրված թիվ ԱՐԱԴ/1386/02/15 կատարողական թերթի համաձայն պետք է Աշոտ Արտավազդի Գալստյանից հօգուտ ՀՀ գ յուղատնտեսության նախարարության բռնագանձել 5796977 ՀՀ դրամ:

Նույն Դատարանի կողմից «16» փետրվար 2021թ. տրված թիվ ԱՐԱԴ/1593/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է ընդհանուր գույքում մասնակիցների բաժիններն հավասար որոշելով պարտապան Աշոտ Արտավազդի Գալստյանի բաժինն ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքերից,առանձնացնել հետևակ կերպ.

ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքում գտնվող 02-100-0110-0003 կադաստրային ծածկագրով գյուղ նշանակության հողամասից և նույն համայնքում 02-100-0126-0008 կադաստրային ծածկագրով գյուղ նշանակության հողամասից բնեղենով առանձնացնել Աշոտ Գալստյանի 1/5 բաժնեմասն ըստ «Վարմոն Ռիլեթի» ՍՊԸ-ի թիվ 334-01/Վ-018 եզրակացության տարբերակների սխեմատիկ հատակագծերի, այդպիսիք ճանաչելով սույն վճռին որպես հավելված:

Ընդհանուր մյուս գույքերն, այն է՝ ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքում գտնվող 251.88 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 987քմ մակերեսով տնամերձ հողատարածքը, հողատարածքում առկա 22,05քմ օժանդակ տնտեսական կառույցները, ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքում գտնվող 54.28քմ շինությունով ծանրաբեռնված 70քմ ընդհանուր մակերեսով տնամերձ հողատարածքը, ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքի 1 փողոց թիվ 41 անասնաշենքը և բնակավայրերի նշանակության 2107քմ ընդհանուր մակերեսով հողատարածքը/կադաստրային արժեքը չվճարված/հրապարակային սակարկություններով վաճառել, վաճառքից առաջացած գումարն ընդհանուր սեփականության մասնակիցներին համապատասխանաբար ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքում գտնվող 251.88քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան, 987քմ մակերեսով տնամերձ հողատարածքի, հողատարածքում առկա 22.05քմ օժանդակ տնտեսական կառույցների, ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքում գտնվող 5428քմ շինությունով ծանրաբեռնված 70քմ ընդհանուր մակերեսով տնամերձ հողատարածքի մասով 1/5 բաժիններով, ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքի 1 փողոց թիվ 41 անասնաշենքի և բնակավայրերի նշանակության 2107քմ ընդհանուր մակաերեսով հողատարածքի 1/2 բաժիններով բաշխել Պարտապանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու նպատակով, եթե սույն վճռի կետ 1-ում թվարկված ընդհանուր գույքերից առանձնացվող բաժնեմասի նկատմամբ բռնագանձում տարածելով պահանջատիրոջ նկատմամբ պարտապան Աշոտ Գալստյանի պարտավորությունները մարելու համար միջոցներն անբավարար կլինեն:

Սեփականության մասնակից, մինչև հայցի հարուցումը մահացած Գևորգ Գալստյանի բաժնի արժեքը թողնել ՀԿԱ ծառայության դեպոզիտ հաշվում մինչև դրա նկատմամբ ժառանգության ձևակերպելը:

Վճիռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում սեփականության մասնակից Սիրվարդ Գալստյանին թույլատրել օգտվելու ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքի 1 փողոց թիվ 41 անասնա շենքը և բնակավայրերի նշանակության 2107քմ ընդհանուր մակերեսով հողատարածքի Պարտապանի 1/2 բաժինը գ նելու նախապատվության իրավունքից:

Պարտապան Աշոտ Գալստյանից հօգուտ Հայցվոր ՀՀ-ի ի դեմս էկոնոմիկայի նախարարության բռնագանձել 4000 ՀՀ դրամ:

Պարզվել է, որ թիվ ԱՐԱԴ/0951/03/16 և թիվ ԱՐԱԴ/1293/03/17 կատարողական թերթերի շրջանակներում պարտապանը ունի 20.313.545 ՀՀ դրամի չկատարված պարտավորություն:

Փորձագետի կողմից տրված եզրակացություններից պարզ է դարձել, որ ընդհանուր գույքերում պարտապան Աշոտ Արտավազդի Գալստյանի բաժինների ընդհանուր արժեքը կազմում է 7.700.000 ՀՀ դրամ:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում այդ գույքերը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով բավարար չեն պահանջատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1-րդ հոդվածներով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով

ՈՐՈՇԵՑԻ

1. 90-օրյա ժամկետով կասեցնել թիվ 01389245 կատարողական վարույթը,
2. Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին/նրանիցից որևէ մեկի նախաձեռնությամբ/ սնանկության դիմում ներկայացնել դատարան,
3. Սույն որոշումն երկու աշխատանքային որվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:
Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Հարկադիր կատարող, արդարադատության ավ. լեյտենանտ Գրիշա Բաղումյան

ստորագրություն